ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinihamayngapetaran@list.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 28>> ապրիլի 2023 թվական N 52-Ա

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐ ՀԱՆՈՒՆ ԿԼԻՄԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻԱՆԱԼԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով «Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնությանը (այսուհետ՝ նախաձեռնություն) միանալու մասին հայտարարությունը և առաջնորդվելով Եվրոպական միության կողմից իրականացվող նախաձեռնության դրույթներով՝

Թալին համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Թալին համայնքին միանալու Եվրոպական միության կողմից իրականացվող նախաձեռնությանը:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Թալին համայնքի ղեկավարին՝

1)Մինչև 2023թ. մայիսի 11-ը նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Թալին համայնքի կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանության գործողությունների ծրագրի մշակման պատասխանատու (այսուհետ՝ պատասխանատու)՝ էներգետիկ կառավարիչ,

2)Հանձնարարել պատասխանատուին՝ երկու տարվա ընթացքում Եվրոպական հանձնաժողովի «Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելք» տարածաշրջանային ծրագրի և այլ գործընկերների աջակցությամբ, Դաշնագրի շրջանակներում մշակել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Թալին համայնքի կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանության գործողությունների ծրագիրը (Sustainable Energy and Climate Action Plan), ինչպես նաև համայնքի կլիմայի փոփոխության հանդեպ դիմակայունության բարձրացմանն ուղղված գործողությունները և միջոցառումները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17	Դեմ-0	Ձեռնպահ-3
1.Բաբկեն Պողոսյան		1.Կարեն Գրիգորյան
2.Արման Կարապետյան		2.Վահե Եղիազարյան
3.Սարգիս Գրիգորյան		3.Գնորգ Սահակյան

4.Սնակ Սիմոնյան

5.Գեղամ Ղազարյան

6.Սերգե Մկրտչյան

7.Միհեր Մարգարյան

8.Ավետիս Մինասյան

9.Հարություն Կարապետյան

10.Էմին Մկրտչյան

11.Արմեն Ծառուկյան

12.Նելլի Մարգարյան

13.Գեղամ Սարգսյան

14.Նարեկ Գրիգորյան

15.Սարգիս Մուրադյան

16.Ղուկաս Հակոբյան

17.Ալբերտ Հարոյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Տ.ՍԱՓԵՅԱՆ

ք.Թալին

28 ապրիլի 2023թ.